



ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

22 ապրիլի 2020 թվականի թիվ 24-Ա

ք. Երևան

**«ԺԱՆՄԵԳԱԼ» ՍՊ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ԹՎԱՅԻՆ ՀԵՌԱՐՁԱԿՄԱՆ ՑԱՆՑԻ ՄԻՋՈՑՈՎ
ՀԵՌՈՒՍՏԱՏՐԱԳՐԻ ՀԵՌԱՐՁԱԿՄԱՆ ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ ԱՐՏԱՀԵՐԹ
ՄՐՑՈՒՑԹՈՒՄ ՀԱՂԹՈՂ ՃԱՆԱԶԵԼՈՒ ԵՎ ԼԻՑԵՆԶԻԱ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

«ԺԱՆՄԵԳԱԼ» ՍՊ ընկերությունը 2020 թվականի փետրվարի 27-ին Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողով է ներկայացրել թվային հեռարձակման ցանցի միջոցով տարածքային սփռման (ՀՀ Տավուշի մարզ), ընդհանուր ուղղվածության ու տվյալ տարածքի բնակչության հետաքրքրությունները բավարարող հեռուստածրագրի եթերային հեռարձակման լիցենզավորման արտահերթ մրցույթին մասնակցելու հայտ:

Տվյալ մրցույթին մասնակցելու համար այլ հայտեր չեն ներկայացվել:

Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի 2020 թվականի մարտի 9-ին կայացած դրնբաց նիստում «ԺԱՆՄԵԳԱԼ» ՍՊ հրապարակել է իր կողմից ներկայացված հայտը և կից փաստաթղթերը:

Ուսումնասիրելով ներկայացված հայտը և կից փաստաթղթերը, Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովը **պարզեց**.

Հայտը և կից փաստաթղթերը ներկայացվել են ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջներին համապատասխան, փաստաթղթերն ամբողջական են, ինչպես նաև դրանցում ակնհայտ կեղծ տվյալներ չեն հայտնաբերվել:

Ներկայացված բիզնես ծրագիրը, տեխնիկական հնարավորությունները, ֆինանսական կարողությունները, աշխատակազմի մասնագիտական պատրաստվածությունը գնահատվում են բավարար:

Մեփական և հայրենական արտադրության հաղորդումների ծավալը համապատասխանում է ՀՀ օրենսդրության պահանջներին:

Հաշվի առնելով վերոնշյալը, 2020 թվականի ապրիլի 22-ին Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի անդամները բաց վարկանիշային քվեարկությամբ ներկայացված հայտին տվել են հետևյալ գնահատականները.

Անուն, ազգանուն	Քվեարկության գնահատական
Տիգրան Հակոբյան	5
Վլադիմիր Օհանյան	4
Կորյուն Առաքելյան	7
Հայկ Քոթանյան	4
Արմեն Մկրտչյան	4
Ռոլանդ Շատոյան	10
Դավիթ Ամալյան	7
Ընդամենը`	41

Հիմք ընդունելով վարկանիշային քվեարկության արդյունքները, ղեկավարվելով «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, 46-րդ հոդվածի 2-րդ մասի, 47-րդ հոդվածի 7-րդ մասի, 61-րդ հոդվածի 7-րդ մասի, Հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողովի 2010 թվականի հունիսի 28-ի «Թվային հեռարձակման ցանցի միջոցով հեռուստաձրագրերի եթերային հեռարձակում իրականացնելու հեռուստաընկերությունների մրցույթի անցկացման կարգը հաստատելու մասին» թիվ 23-Ն որոշմամբ հաստատված կարգի դրույթներով և հաշվի առնելով «ԺԱՆՄԵԳԱԼ» ՍՊ ընկերության` թվային հեռարձակման ցանցի միջոցով տարածքային սփռման, ընդհանուր ուղղվածության ու տվյալ տարածքի բնակչության հետաքրքրությունները բավարարող հեռուստաձրագրի եթերային հեռարձակման լիցենզավորման արտահերթ մրցույթին մասնակցելու 2020 թվականի փետրվարի 27-ի հայտը, Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովը **որոշեց**.

1. «ԺԱՆՄԵԳԱԼ» ՍՊ ընկերությանը ճանաչել թվային հեռարձակման ցանցի միջոցով տարածքային սփռման, ընդհանուր ուղղվածության ու տվյալ տարածքի բնակչության հետաքրքրությունները բավարարող հեռուստածրագրի եթերային հեռարձակման լիցենզավորման արտահերթ մրցույթի հաղթող:

2. «ԺԱՆՄԵԳԱԼ» ՍՊ ընկերությանը տրամադրել ՀՀ Տավուշի մարզի տարածքում հեռուստածրագրի եթերային հեռարձակման լիցենզիա՝ մինչև 2021 թվականի հունվարի 20-ը գործողության ժամկետով:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում «ԺԱՆՄԵԳԱԼ» ՍՊ ընկերությանը ծանուցելուց մեկ օր հետո:

4. Սույն որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան՝ ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

**ՀԵՌՈՒՍՏՍԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՑԻ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ**

Տ. ՀԱԿՈԲՅԱՆ

2020թ. ապրիլի 22
ք. Երևան